ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԿԱԹՆԱՋՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հասցե՝ 1815, Լոռու մարզ,
գ. Կաթնաջուր 13փ. շենք 1
E-mail: Katnajur1@mail.ru

«27» «ապրիլ» 2015թ. Հեռ՝ 099-00-03-02

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10
Կաթնաջուր-Շիրակամուտ ավտոճանապարհի ճամփեզրի ծառերի սանիտարական էտ կատարելու և դրանից առաջացած փայտանյութը բաշխելու մասին

Ղեկավարելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16/19.1 հոդվածով. հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կաթնաջուր-Շիրակամուտ ավտոճանապարհի ճամփեզրի ծառերը վերևի մասից գրեթե կիսով չափ չորացել են և լուրջ վտանգ են հանդիսանում ավտոմեքենաների և մարդկանց, ինչպես նաև ծառերի հետագա կյանքի համար, Կաթնաջրի համայնքի ավագանին

Որոշեց՝

- Տալ համաձայնություն, թույլատրելու գյուղապետարանին իրականացնելու Կաթնաջուր-Շիրակամուտ ավտոճանապարհի ճամփեզրի ծառերի սանիտարական էտի աշխատանքները.
- Սանիտարական էտի արդյունքում առաջացած փայտանյութն անվճար հատկացնել համայնքի բնակչությանը, առաջնահերթություն տալով երկրաշարժի հետևանքով վագոնտնակում բնակվող, զինծառայողների, սոցիալական հատուկ խմբերի պատկանող և խիստ կարիքավոր ընտանիքներին, փայտանյութի էտման և տեղափոխման աշխատանքներն իրենց ուժերով և միջոցներով իրականացնելու պայմանով:

Կաթնաջրի համայնքի ավագանու անդամներ			
Անուն, ազգանուն	Կողմ	դեմ	ձեռնպահ
Թորոսյան Մերուժան			
Մանուկյան Սմբատ			
Պապոյան Մանվել			
Սարգսյան Սամվել			
Սիմոնյան Գագիկ			

Գյուղապետ՝ /Ա. Պապոյան/